



05/4323-17  
1/17.2/3634-17

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

№ 412-ՆԿ

« 10 » սեպտեմբեր 2017 թ.

ք.Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2016  
ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ-  
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) 2016թ. գործունեության արդյունքների ամփոփման կոլեգիայի նիստի ընթացքում առաջադրված խնդիրների կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. մարտի 3-ի N259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ ԱԻՆ կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Հաստատել «ՀՀ ԱԻՆ 2017 թվականի կոլեգիայի նիստում ՀՀ ԱԻՆ 2016 թվականի գործունեության արդյունքների ամփոփման ընթացքում առաջադրված միջոցառումների իրականացման պլան-ժամանակացույց»-ը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ից 7-րդ կետերի միջոցառումների կատարման պատասխանատու հանդիսացող ստորաբաժանումների պետերին՝ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարին՝ 2017

թվականի առաջին կիսամյակի համար մինչև հաջորդ ամսվա 10-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև դեկտեմբերի 5-ը:

3. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 8-ից 23-րդ կետերի միջոցառումների կատարման պատասխանատու հանդիսացող ստորաբաժանումների պետերին՝ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենին՝ 2017 թվականի առաջին կիսամյակի համար մինչև հաջորդ ամսվա 10-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև դեկտեմբերի 5-ը:

4. Սույն հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված միջոցառումների համակատարող հանդիսացող ստորաբաժանումների պետերին՝ միջոցառման հետ կապված առաջարկությունները կամ այդ ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել պատասխանատու ստորաբաժանման պետին՝ եթե այլ ժամկետներ սահմանված չեն, 2017 թվականի առաջին կիսամյակի համար մինչև հաջորդ ամսվա 5-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև նոյեմբերի 25-ը:

5. ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրենին՝

ապահովել սույն հրամանի 3-րդ կետով ստացված տեղեկատվության ամփոփումը և ներկայացնել ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարին՝ 2017 թվականի առաջին կիսամյակի համար մինչև հաջորդ ամսվա 15-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև դեկտեմբերի 10-ը:

6. ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարին՝


ապահովել սույն հրամանի 2-րդ և 5-րդ կետերով ստացված տեղեկատվության ամփոփումն ու ներկայացնել ինձ՝ 2017 թվականի առաջին կիսամյակի համար մինչև հաջորդ ամսվա 20-ը, երկրորդ կիսամյակի համար՝ մինչև դեկտեմբերի 15-ը:

7. Հրամանի կատարման հսկողությունը ստանձնում եմ ինքս:

8. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՏՈՆՈՅԱՆ

Sign